ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/62

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Նաղդալյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8885-2019 գրությամբ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի 20.05.2019թ. թիվ 09/578 գրության հիման վրա,

24.05.2019թ. «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարզական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարզական համալսարան» հիմնադրամը 22.05.2019թ. թիվ 22/0816-500 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարզական համալսարան» հիմնադրամի կողմից տարածքների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով ս.թ. հունվարի 31-ին հայտարարված «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչված «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված խախտման, այն է՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության ոչ բավարար հիմնավորման համար, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով գնման ընթացակարգի մյուս մասնակցի՝ «Բի էլ գրուպ» ՍՊԸ կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի քննության արդյունքում 13.05.2019թ. կայացված թիվ ԳԲՔԱ-ԷՕ-2019/10 որոշումը, «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով ներկայացնում ենք համապատասխան փաստաթղթերի փաթեթը:»:

3. <u>«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ. գրությամբ դիմել է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8885-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը 21.06.2019թ. ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 բողոքը բավարարելու արդյունքում նախաձեռնվել է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

Այսպես, «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն 13.05.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանին ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 բողոքով հայտնել է հետևյալը.

««Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «ՀՊՄՀ մասնաշենքերի և բակային տարածքների մաքրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՑԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ:

Վերոնշված բաց մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացրել «Կրիստալ Քլինինգ» ՍՊՆ-ն և «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն (այսու հետևանք՝ Բողոքաբեր):

«ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 2/ա կետի համաձայն՝ բաց մրցույթի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն, իսկ բաց մրցույթի երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Բիէլ Գրուպ» ՍՊԸ-ն:

Իսկ արդեն www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ առանց գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցնող մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատելու արձանագրության՝ 29.03.2019թ. հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշում:

«Գնումների մասին»ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հանաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարվելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում մասնակցի հայտի, ներառյալ գնային, իսկ ապրանքների գնման դեպքում

նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված պարզաբանման համաձայն՝ «Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները՝ հայտնում ենք, որ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարի կողմից անհապաղ պետք է տրամադրվեն նման պահանջ ներկայ ացրած այլ մասնակցին»:

29.03.2019թ. «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ո էլեկտրոնային եղանակով դիմել է տեղեկատվություն տնօրինող բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ խնդրելով տրամադրել իրեն «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Սակայն բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.03.2019թ. ներկայացված որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջին պատասխանել է միայն 04.04.2019թ. ներկայացնելով գրություն, ըստ որի մերժում է Բողոքաբերի կողմից ներկայացված դիմումը՝ այդպես էլ չտրամադրելով «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որի արդյունքում «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն փաստացիորեն զրկվել է հնարավորությունից գնահատելու բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած ենթադրյալ որոշումը՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատել ու և վերջինիս հաղթողմասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ավելին, Բողոքաբերի կողմից ներկայացված դիմումը՝ պահանջված փաստաթղթերը ընկերությանը չներկայացնելով, ստեղծել է մի իրավիճակ, երբ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ 29.03.2019թ. պահանջելով փաստաթղթերը և այդպես էլ չստանալով զրկվել է Օրենքի 46-րդ

հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իր իրավունքը իրացնելու հնարավորությունից:

«Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-Լ0-2019/10 բողոքով հայտնել նաև, որ «Բողոքի քննությանը հրավիրված առաջին նիստից հետո «ՀՊՄՀ-ԲՄԾՅԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից թե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և թե «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ին տրամադրվեցին «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

«Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ուսումնասիրվեցին գնահատող հանձնաժողովի կողմից տրամադրված «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի պատճենները, և «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն հանգեց այն եզրակացության, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ուստի «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու որոշումը իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգիգնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, 22.03.2019թ. ժամը 11.00 նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշեց.

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Տեխնիկական միջոցներ>> որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը թերի են, այն է՝ չեն ներկայացվել հրավերի 2.5 կետի «2» գ ենթակետով սահմանված սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի փաստաթղթերի (մասնավորապես, պայմանագրի և/կամ հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի էլեկտրոնային հաշվի, ինվոյսի և վճարային փաստաթղթերի վճարման հանձնարարագրի, դրամարկղի մուտքի անդորրագրի կամ ՀԴՄ կտրոնի) պատճենները:

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Աշխատանքային ռեսուրս>> որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն որոշվեց՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով ծանուցել վերջինիս՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնել.

Հրավերի «2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը>> բաժնի 2.5 կետի 2գ ենթակետով սահմանված տեխնիկական միջոցների նկատմամբ սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի /մասնավորապես պայմանագրի և/կամ հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի էլեկտրոնային հաշվի, ինվոյսի և վճարային փաստաթղթերի վճարման հանձնարարգրի,դրամարկղի մուտքի անդորրագրի կամ ՀԴՄ կտրոնի/ պատճենները,

Հրավերի «2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին մասնակցի համապատասահանության հինավորման նպատակով ցանկով ներկայացված թվով 50 աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի կամ հրավերի պահանջներին համապատասխանությունը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները:

Այնուհետև, «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրվեց, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և վերջինս ճանաչվեց հաղթող մասնակից և որոշում կայացվեց «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Գտնում ենք, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից չեն շտկվել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ.

«Աշխատանքային ռեսուրս» որակավորման չափանիշի մասով

Գտնում ենք, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից իբրև թե շտկված և ներկայացված <<Քաղվածք «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի թվով 50 աշխատակիցների միջև կնքված աշխատանքային պայմանագրերից>> անվանում ունեցող փաստաթուղթը, ըստ

էության, Ընկերության կողմից առաջին փուլում ներկայացված նույն փաստաթուղթն է՝ փոխված անունով և <<դրույքի>> անվանումով ավելացրած սյունակով: Եվ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <<Աշխատանքային ռեսուրս>> որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար և հանձնաժողովը հստակ պահանջել է 50 աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի կամ հրավերի պահանջներին համապատասխանությունը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները, ապա կրկնակի ներկայացրած գրեթե նույն գրությունը չէր կարող բավարար գնահատվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Գտնում ենք, որ նման փաստաթուղթը չի կարող համարվել հիմնավոր ապացույց առ այն, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ում աշխատում են Ընթացակարգի հրավերով պահանջված լրիվ դրույքով 50 հավաքարար: Ավելին, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ հենց «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի որոշ աշխատակիցների պնդմամբ՝ Ընկերությունում առկա է ընդամենը 20-22 լրիվ դրույքով աշխատող հավաքարարներ, իսկ մնացածբոլոր աշխատակիցները ժամավճարով աշխատող հավաքարարներ են: Իսկ նշված տեղեկատվությունը հնարավոր է բացահայտել միայն «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից իր աշխատակիցների համար ՀՀ պետական բյուջե վճարվող եկամտահարկի վերաբերյալ տեղեկատվությունից: Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքերից “Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն 16.04.2019թ. (գրության պատճեն կցվում է) դիմել է ՀՀ ՊԵԿ՝ խնդրելով հայտնել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված համապատասխան քաղվածքով ներկայացված աշխատակիցները իրականում հանդիսանում են տվյալ ՍՊԸ-ում լրիվ դրույքով աշխատողներ, թե ոչ:

<<Տեխնիկական միջոց>> որակավորման չափանիշի մասով

Ինչպես արդեն նշվել է, «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից պահանջվել է ներկայացնել տեխնիկական միջոցների նկատմամբ սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի /մասնավորապես, պայմանագրի և/կամ հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի էլեկտրոնային հաշվի, ինվոյսի և վճարային փաստաթղթերի վճարման հանձնարարգրի,դրամարկղի մուտքի անդորրագրի կամ ՀԴՄ կտրոնի/ պատճենները:

Որպես շտկում և տեխնիկական միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթեր «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի և ոմն Արսեն Բարսեղյանի միջև 01.03.2019թ. կնքված առուվաճառքի

պայմանգրի պատճեն, որից պարզ է դառնում (պայմանագրի 1.1 կետ), որ Ա.Բարսեղյանը պարտավորվում է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով: Սակայն պայմանագրին կցված չէ վկայակոչված թիվ 1 հավելվածը, որից առնվազ պարզ կդառնար, թե նշված առուվաճառքի պայմանգրով ինչ է վաճառվել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին և արդյոք առանց հավելվածի պայմանագիրը կարելի է գնահատել որպես՝ տեխնիկական միջոցների նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող պատշաճ փաստաթուղթ: Բացի այդ, նշված պայմանագրին կցված չեն որևէ հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթուղթ՝ էլեկտրոնային հաշիվ, ինվոյսի և վճարային փաստաթուղ, ինչը պահանջվել է գնահատող հանձնաժողովի կողմից սակայն չի ներկայացվել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից:

Գտնում ենք, որ նման պայմաններում գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 48-րդ կետի պահանջների խախտում:»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են

Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 2019 թվականիմարտի 27-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:

Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մարտի 27-ին կայացրած «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող ան ձ Լ.Օհանյանը 13.05.2019թ.-ին կայացրած թիվ ԳԲՔԱ-Լ0-2019/10 որոշմամբ բավարարել է «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-Լ0-2019/10 բողոքը՝ հիմքում դնելով հետևյալ հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամն համաձայն.

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանվել է «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը, դրա ներկայացման և գնահատման կարգը:

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 01.03.2019թ. Ընկերության և Արսեն Բարսեղյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պատճեն, որի 1.1 կետի համաձայն՝ Ա.Բարսեղյանը պարտավորվում է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված) ապրանքը: Սակայն պայմանագրին կից չի ներկայացվել նշված Հավելվածը:

Նույն պայմանագրին կից նաև չի ներկայացվել որևէ հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, այն է՝ էլեկտրոնային հաշիվ, հանձման-ընդունման արձանագրություն, ավարտական ակտ կամ այլ փաստաթղթեր, որոնց առկայության պայմաններում ևս հնարավոր կլիներ փաստելու, որ պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքը (երը) հանձնվել է (են) գնորդին: Ընդ որում, վերը նշված փաստաթղթերի առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ պարզել, թե ինչպիսի ապրանք (ներ) է (են) հանձնվել գնորդին, և արդյո՞ք դրանք համապատասխանում են Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին, թե՞ ոչ:

Տվյալ դեպքում, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հավելվածի բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել պայմանագրի առարկան և քանակը, որոնց առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ գնահատել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի՝ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին բավարարելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է «Բի Էլ գրուպ» ՍՊԸ-ի բողոքով նշված «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով առկա անհամապատասխանությանը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ քանի որ հրավերով

սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը բավարար գնահատված լինելու հանգամանքն ակնհայտ և կոպիտ խախտում է, բողոքն արդեն իսկ, այդ հիմքով, ենթակա է բավարարման, ուստի Բողոքներ քննող անձը, բողոքով ներկայացված այլ հիմքի, չի անդրադառնում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված անհամապատասխանության առկայության պարագայում մասնակցի հայտը չէր կարող գնահատվել բավարար և վերջինս չէր կարող ճանաչվել հաղթող մասնակից, քանի որ մասնակիցը չի բավարարել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, չունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ համապատասխան տեխնիկական միջոցներ, իսկ նման պայմաններում Պատվիրատուի կողմից մասնակցի հայտը բավարար գնահատելու պարագայում խախտվել են Օրենքի 6-րդ, 34-րդ և Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց «Բի Էլ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 17.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

2019 թվականիմարտի 27-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները:

2019 թվականի մարտի 27-ին կայացրած «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Գտնում ենք, որ Լ.Օհանյանի 13.05.2019թ. N ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշումը իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Կարգի 47-րդ կետի պահանջները, բացի այդ,նշված որոշմամբ խախտվել են բողոքի քննության բազմակողմանիությունը և լրիվությունը հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, «Բի էլ Գրու պ» ՍՊԸ-ի 17.04.2019թ .ներկայ ացրած բողոքը և նշված բողոքով Լ.Օհանյ անի կողմից կայացրած N ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշումը ուղղակիորեն առընչվել են «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի օրինական շահերին, ավելին, վերոհիշյալ որոշմամբ խախտվել են «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի իրավունքները:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայ ացրած անձը,պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն յուրաքանչյուր

անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայ ացնել ով համանման բողոք: Սույն հոդվածի ամաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն գործին մասնակցող անձինք են՝ կողմերը, երրորդ անձինք և դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված գործերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

Ակնհայտ է, որ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ի 17.04.2019թ. ներկայացրած բողոքը կարող էր անխուսափելիորեն ազդել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի իրավունքների և պարտականությունների վրա, ուստի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանը պարտավոր էր ծանուցել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին՝ վերջինիս ներգրավվելով վերոհիշյալ բողոքի քննությանը և հնարավորություն ընձեռնելով ներկա լինել ու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իր տեսակետները:

Միայն այս դեպքում կապահովվեր ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բողոքի քննության բազմակողմանիությունը և լրիվությունը:

Մինչդեռ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն տեղյակ չլինելով «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքի վերաբերյալ և դրա հետևանքով չմասնակցելով այդ բողոքի քննությանը՝ զրկվել է բողոքի քննության ընթացքում հնարավորությունից ներկայացնել իր դիրքորոշ ում և պաշտպան ել իր օրինական շ ահերը:

Երկրորդ, գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրել է, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը հակասում են բաց մրցույթի հրավերի պահանջներին: Լ.Օհանյանը արձանագրել է, որ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 01.03.2019թ. Ընկերության և Արսեն Բարսեղյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պատճեն, որի 1.1 կետի համաձայն՝ Ա.Բարսեղյանը պարտավորվում է

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված) ապրանքը: Սակայն պայմանագրին կից չի ներկայացվել նշված Հավելվածը: Բացի այդ, ըստԼ.Օհանյանի, նույն պայմանագրին կից նաև չի ներկայացվել որևէ հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, այն է՝ էլեկտրոնային հաշիվ, հանձմսն-ընդունման արձանագրություն, ավարտական ակտ կամ այլ փաստաթղթեր, որոնց առկայության պայմաններում ևս հնարավոր կլիներ փաստելու, որ պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքը (երը) հանձնվել է (են) գնորդին: Ընդ որում, վերը նշված փաստաթղթերի առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ պարզել, թե ինչպիսի ապրանք (ներ) է (են) հանձնվել գնորդին, և արդյո՞ք դրանք համապատասխանում են Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված «Տեխնիկական միջոցներ «որակավորման չ ափանիշ ին, թե՞ ոչ :

Տվյալ դեպքում, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգել է այն եզրակացության, որ Հավելվածի բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել պայմանագրի առարկան և քանակը, որոնց առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ գնահատել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի՝ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշինբավարարելու հանգամանքը:

Ըստ Լ.Օհանյանի՝ քանի որ «Բի էլ գրուպ» ՍՊԸ-ի բողոքով նշված «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չաւիանիշի մասով առկա է անհամապատասխանություն, ապա Բողոքներ քննող անձը գտնու մ է, որ քանի որ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ «որակավորման չափանիշը բավարար գնահատված լինելու հանգամանքն ակնհայտ և կոպիտ խախտում է, բողոքն արդեն իսկ, այդ հիմքով, ենթակա է բավարարման, ուստի Բողոքներ քննող անձը, բողոքով ներկայացված այլ հիմքի, չի անդրադառնում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգել է այն եզրակացության, որ արձանագրված անհամապատասխանության առկայության պարագայում մասնակցի հայտը չէր կարող գնահատվել բավարար և վերջինս չէր կարող ճանաչվել հաղթող մասնակից, քանի որ մասնակիցը չի բավարարել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, չունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող համապատասխան տեխնիկական միջոցներ, իսկ նման պայմաններում Պատվիրատուի կողմից մասնակցի հայտը բավարար գնահատելու

պարագայում խախտվել են Օրենքի 6-րդ, 34-րդ և Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները:

Փաստորեն Լ.Օհանյ անի 13.05.2019թ . N ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հրավերով պահանջված տեխնիկական միջոցի ձեռքբերման նպատակով կնքված առուվաճառքի պայմանագրին կից չի ներկայացվել պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածը և դրան կից որևէ հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, որի արդյունքում ըստ Լ.Օհան յանի, «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը պետք է գնահատվեին հրավերի պահանջներին չհամապատասխանող և հայտը այդ հիմքով մերժվեր:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ հրավերի 2.5 կետի համաձայն՝ «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
փակ վիտրաժային ապակիների լվացման համար նախատեսված սարքավորում	Շենքերի ճակատային հատվածների մինչև 20 մետր բարձրության փակ վիտրաժային ապակիների լվացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
հատակների լվացման և չորացման համար նախատեսված սարքավորում	Բնական քարերով (մարմար, գրանիտ) և (կամ) արհեստական սալիկներով սալիկապատ հատակների լվացման և չորացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
գորգերի, ուղեգորգերի և (կամ) հատակի արհեստական ծածկերի լվացման և չորացման համար սարքավորում	Գորգերի, ուղեգորգերի և (կամ) հատակի արհեստական ծածկերի լվացման և չորացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
փոշեկուլներ	Մասնագիտացված (պրոֆեսիոնալ) փոշեկուլներ	4 միավոր

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի վերոհիշյալ պահանջներից ակնհայտ է դառնում, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից (այսինքն, «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ից) տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները պետք է ընդամենը ներկայացվեին հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

Մինչդեռ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ից պահանջվել են լրացուցիչ այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն եղել բաց մրցույթի հրավերով՝ այն է տվյալ տեխնիկական միջոցների գնման պայմանագրի պատճեն և համապատասխանաբար տվյալ պայմանագրին կից հաշվապահական հաշվառման փաստաթղթերը:

Այնուհետև, Լ.Օհանյանը գնահատել է «ՀՊՄՀ-ԲՄԾՅԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից ապօրինի պահանջած և հրավերով չնախատեսված փաստաթղթերը և դրանցում արձանագրելով բացթողումներ, գնումների հետկապված բողոքներ քննող անձը գտել է, որ դրանք չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Մինչդեռ, «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով չպահանջված փաստաթղթերը ընդհանրապես ենթակա չէին գնահատման, և առավել ևս դրանք չէին կարող հիմք հանդիսանալ ընկերության հայտը մերժելու համար:

Մինչդեռ ինչպես նշել ենք, նման փաստաթղթեր «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն ընդհանրապես չպետք է ներկայացներ և չէր էլ ներկայացրել առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելուց հետո, և միայն բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի լրացուցիչ պահանջից հետո ներկայացրեց նաև այդ փաստաթուղթը:

Այսպիսով, եթե «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին ներգրավեին «Բի էլ Գրուպ»ՍՊԸ-ի 17.04.2019թ .ներկայ ացրած բողոքի քննությանը, «Կրիստալ Քլինինգ »ՍՊԸ-ն առնվազն հնարավորություն կունենար ներկայացնել սույն դիրքորոշումը գնումների հետկապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանին և միգուցե Լ.Օհանյանի կողմից չընդունվեր նման բովանդակությամբ ոչ իրավաչափ որոշում:

Ելնելով վերոհիշյալ փաստերից՝ գտնում ենք, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 13.05.2019թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-Լ.Օ-2019/10 որոշումն իրավաչափ չէ, քանզի այն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, ուստի այն անվավեր է:

Համապատասխանաբար, եթե իրավաչափ չէ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի 13.05.2019թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշումը, քանի որ ՀՀ գնումների հետկապված բողոքներ քննող անձի կողմից բողոքի շրջանակներում կատարվել է ոչ օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրություն և քննություն՝ նախ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 բողոքին չներգրավելով «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին, իսկ այնուհետև նաև բողոքի բավարարման հիմքում դնելով այնպիսի փաստաթղթերի ուսումնասիրություն, որոնք «Կրիստալ Քլ ինինգ» ՍՊԸ-ն 2-րդ փուլի շրջանակներում չպետք է ներկայացներ, ուստի և «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել նաև որևիցե խախտում՝ նախատեսված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, այդ թվում նաև նույն կետի ա) ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել են մերժել «Քրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար՝ ՀՊՄՀ մասնաշենքերի և բակային տարածքների մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն և «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 13.03.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն, իսկ երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 22.03.2019թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով առկա են

անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված մասնակցին տրվել է արձանագրված թերությունները վերացնելու ժամկետ:

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 01.03.2019թ. «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի և Արսեն Բարսեղյանի միջև կնքված առուվաճառքի պայմանգրի պատճեն, որի 1.1 կետի համաձայն՝ Ա.Բարսեղյանը պարտավորվում է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով: Հանձնաժողովի 27.03.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8885-2019 գրությամբ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով

սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար

սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամն համաձայն.

«Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները.

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
փակ վիտրաժային ապակիների լվացման համար նախատեսված սարքավորում	Շենքերի ճակատային հատվածների մինչև 20 մետր բարձրության փակ վիտրաժային ապակիների լվացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
հատակների լվացման և չորացման համար նախատեսված սարքավորում	Բնական քարերով (մարմար, գրանիտ) և (կամ) արհեստական սալիկներով սալիկապատ հատակների լվացման և չորացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
գորգերի, ուղեգորգերի և (կամ) հատակի արհեստական ծածկերի լվացման և չորացման համար սարքավորում	Գորգերի, ուղեգորգերի և (կամ) հատակի արհեստական ծածկերի լվացման և չորացման համար նախատեսված մասնագիտացված սարքավորում	1 միավոր
փոշեկուլներ	Մասնագիտացված (պրոֆեսիոնալ) փոշեկուլներ	4 միավոր

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների

նկատմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանվել է «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը, դրա ներկայացման և գնահատման կարգը:

«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 01.03.2019թ. Ընկերության և Արսեն Բարսեղյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պատճեն, որի 1.1 կետի համաձայն՝ Ա.Բարսեղյանը պարտավորվում է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված) ապրանքը: Սակայն պայմանագրին կից չի ներկայացվել նշված Հավելվածը:

Նույն պայմանագրին կից նաև չի ներկայացվել որևէ հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, այն է՝ էլեկտրոնային հաշիվ, հանձման-ընդունման արձանագրություն, ավարտական ակտ կամ այլ փաստաթղթեր, որոնց առկայության պայմաններում ևս հնարավոր կլիներ փաստելու, որ պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքը (երը) հանձնվել է (են) գնորդին: Ընդ որում, վերը նշված փաստաթղթերի առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ պարզել, թե ինչպիսի ապրանք (ներ) է (են) հանձնվել գնորդին, և արդյո՞ք դրանք համապատասխանում են Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին, թե՞ ոչ:

Տվյալ դեպքում, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հավելվածի բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել պայմանագրի առարկան և քանակը, որոնց առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ գնահատել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի՝ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին բավարարելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունանալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է

հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով

սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ինչ վերաբերում է «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի կողմից նշված այն կարծիքին, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պարտավոր էր ծանուցել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին՝ վերջինիս ներգրավվելով բողոքի քննությանը և հնարավորություն ընձեռնելով ներկա լինել ու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իր տեսակետները և որ միայն այդ դեպքում կապահովվեր բողոքի քննության բազմակողմանիությունը և լրիվությունը, ապա Բողոքներ քննող անձը հայտնում է հետրյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա լինելու բողոքի քննության նպատակով հրավիրված նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ եթե «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն գտնում էր, որ կազմակերպության շահերը կարող էին խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, ապա կազմակերպությունը իրավունք ուներ մասնակցելու բողոքարկման ընթացակարգին: Բողոքի քննության բազմակողմանիությունը և լրիվությունը

ապահովելու նպատակով, բողոքարկման ընթացակարգի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը հրապարակվում է www.gnumner.am կայքում, իսկ բողոքի քննության բոլոր նիստերը առցանց հեռարձակվում են www.e-gov.am/gnumner/ կայքում, ինչը հասանելի է եղել ցանկացած անձի, այդ թվում նաև «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի համար, ուստի եթե «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն ցանկություն ունենար մասնակցել բողոքարկման ընթացակարգին, ապա կարող էր ներկայացներ համապատասխան միջնորդություն և ներգրավվեր որպես երրորդ անձ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8885-2019 գրությամբ «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**